

ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխատանքը կը մաքրէ կ'ըսեն միտքը մարդերուն,
 Իմաստուն խօսք անկասկած եւ փաստըւած հաւաստում.
 Թմրեցուցիչ մըն է այդ՝ զօրաւոր քան միւսներէն,
 Եւ որ մեր մէջ կ'արգիլէ մոլորումներն անօրէն,

Ու թոյլ չի տար չարութիւն, եւ արարքներ վատոգի,
 Որ հաստատուին մեզմէ ներս: Թշնամի՛ն է ձանձրոյթին,
 Որ միշտ արմատն է չարեաց, եւ դա՛շտ մը ուր կը վխտան
 Նենգութիւններ եւ օձեր: Աշխատանքը թոյլ չի՛ տար,

Որ մարդ ըզգայ օրն ի բուն թշուառութիւնը իրեն,
 Եւ ծանրութիւնն օրերուն: Անպատուհան եւ անդուռ՝
 Ամրո՛ց մըն է, ուրկէ ներս վատութիւններ ինքնածին,
 Մտնել, ապրիլ, չե՛ն կրնար: Դաւադրութեանց դիմաց ա՛ն՝

Հալածի՛չն է լըռելեայն. եւ սիրտերու սեւ ու նեղ՝
 Հականելի՛չ իսկական, որ կ'ըսպաննէ մանրէներն,
 Եւ կ'ազատէ ախտերէն: Աշխատանքին մէջ է որ,
 Մարդ կը մոռնայ ինքզինքին հետ իր վիշտերը բոլոր:

ԱՆՆԷԼ